ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ. Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. գիրք 1. Գեղարքունիքի մարզ, *Երևան, “Ասողիկ” հրատ., 2018, 402 էջ *:*

Բանալի բառեր՝ հայերենագիտություն, բարբառագիտություն, բարբառ, խոսվածք, բարբառային համապատկեր, բարբառային միավորներ, բարբառային հատկանիշներ, Մշո բարբառ, Բայազետի բարբառ, Դիադինի բարբառ, Գանձակի միջբարբառ, Մակուի խոսվածք, Արծափի խոսվածք, բարբառային բնութագրեր:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտն իր գոյության յոթուկես տասնամյակում հսկայածավալ աշխատանք է կատարել հայերենագիտության, մասնավորապես՝ հայ բարբառագիտության բնագավառում:


ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

ԳԻՐՔ 1

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Բարբառագիտությունը, լինելով հայերենագիտության կարևորագույն ճյուղերից մեկը, մշտապես եղել է ինչպես օտարազգի ուսումնասիրողների, այնպես էլ հայ բարբառագետների ուշադրության կենտրոնում: Հայ լեզվաբանության երախտավորներ Հրաչյա Աճառյանի, Արարատ Ղարիբյանի, Էդուարդ Աղայանի, Գևորգ Ջահուկյանի և այլոց գիտական մեծ վաստակի զգալի մասը կազմում են բարբառագիտական աշխատանքները: Իսկ ինստիտուտի բարբառագիտության բաժնի վաստակաշատ բարբառագետներ Հովհաննես Մուրադյանի, Ալբերտ Խաչատրյանի, Մարո Մուրադյանի, Անի Հանեյանի, Դարիկո Կոստանդյանի ու այլոց ջանքերով տարիներ շարունակ ստեղծվել են հայերենագիտության այս ոլորտի արժեքավոր և մնայուն ուսումնասիրություններ:

Այսօր էլ շարունակում են արդիական մնալ հայերենի առանձին բարբառների համաժամանակյա և տարաժամանակյա քննության, մերձավոր խոսվածքների, բարբառների ու բարբառային խմբերի համեմատական և պատմական ուսումնասիրության, բառապաշարի շերտերի, իմաստային խմբերի տարածագործառական բնութագրման, բարբառային հատկանիշների ու զուգաբանությունների տարածման սահմանների ճշտման, ինչպես նաև հարակից մյուս հարցերը: Այդուհանդերձ, դեռևս չկա այն համապարփակ աշխատանքը, որն ընդգրկուն ներկայացնի մեր երկրի տարածքի արդի ողջ բարբառային համապատկերը: Հենց այս հանգամանքը հաշվի

* *Ներկայացվել է 23. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 05. V. 2020 թ.:*

առնելով՝ Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը Հայաստանի բարբառային միավորների և հատկանիշների տարածման արդի պատկերի ձևավորման, բարբառային քարտեզների կազմման նպատակով իրականացնում է "Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր" համալիր ծրագիրը:

Հետազոտությունը, որի առաջին փուլը կատարվել է 2013–2015 թթ.՝ ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանի և բարբառագիտության բաժնի աշխատակիցներ Հասմիկ Խաչատրյանի, Ժաննա Միքայելյանի, Գարիկ Մկրտչյանի կողմից, իրականացվել է Գեղարքունիքի մարզում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Կատարված հավաքչական մանրակրկիտ աշխատանքների, համապատասխան գիտական գրականության և ինստիտուտում առկա՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով գրանցված նյութերի հիման վրա տրվել են Գեղարքունիքի մարզի բնակավայրերի բարբառային բնութագրերը, դրանք համալրվել են բարբառային և բանահյուսական հարուստ նյութերով, ժողովրդագրական տեղեկություններով ու փաստական տվյալներով, որոնք էլ ձևավորել են տարածքի բարբառային միավորների ու դրանց հատկանիշների տարածման համընդգրկուն պատկերը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Կատվալյանի աշխատասիրությամբ է ամբողջացել "Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր" խորագրով ուսումնասիրությունների շարքի անդրանիկ՝ "Գեղարքունիքի մարզ" հատորը, որը Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակել է "Ասողիկ" հրատարակչությունը: Պատասխանատու խմբագիրն է բանասիրական գիտությունների թեկնածու Նազիկ Հովհաննիսյանը:

Աշխատությունը, որն արձանագրում է բարբառային հայերենի արդի վիճակը Գեղարքունիքի մարզի շուրջ վեց տասնյակ բնակավայրերում, բաղկացած է երեք մասից և յոթ գլխից:

Առաջին մասում ընդհանուր տեղեկություններով ներկայացվում են տարածքի բնակավայրերում այսօր գործառող Մշո, Բայազետի ու Դիադինի բարբառները, Գանձակի միջբարբառը, Մակուի և Արծափի խոսվածքները:

Երկրորդ մասում այբբենական կարգով ներկայացվում են մարզի բնակավայրերը՝ իրենց բարբառային խոսքի գործառական հատկանիշներով և զարգացման միտումներով, բարբառային բնութագրերով, ինչպես նաև խոսվածքային առանձնահատկություններով: Բարբառային հատկանիշները համեմատական կարգով ներկայացվում են նաև Գ. Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման աղյուսակներով:

Երրորդ մասը ընդգրկում է գիտական տառադարձությամբ գրանցված բարբառային կենդանի խոսքի բազմաթիվ տարաբնույթ նմուշներ:

Աշխատության վերջում զետեղված է նաև մարզի տարածքի խոսվածքների բարբառային բառերի ցանկը, որտեղ յուրաքանչյուր բառային միավոր նաև տարբերակված է ըստ բնակավայրերի:

Բարբառագիտական աշխատանքները լույս են սփռում ոչ միայն հայերենագիտության, ընդհանուր ու համեմատական լեզվաբանության, այլև հայոց պատմության, ազգագրության, բանահյուսության, ձեռագրագիտության և հարակից այլ բնագավառների խնդիրներին: Նման առաքելություն ունի նաև հայ բարբառագիտական առկա գրականությունը ևս մեկ ուշագրավ միավորով համալրող, արժեքավոր այս աշխատանքը, որը ծնվել է տարիների աշխատանքով ու նվիրումով:

Յանկալի կլիներ արժեքավոր այս աշխատանքում զետեղված տեսնել նաև մարզի բնակավայրերի բարբառային հատկանիշները, դրանց տարածման սահմանները լուսաբանող լեզվաաշխարհագրական քարտեզներ: Սակայն, կարծում ենք, որ դա կարող է իրականացվել նաև ամփոփ՝ բոլոր մարզերն ընդգրկող լրացուցիչ հատորի ձևով:

Վ. Կատվալյանի "Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. գիրք 1. Գեղարքունիքի մարզ" ուսումնասիրությունը նախատեսված է լեզվաբանների, բարբառագետների, ազգագրագետների, ուսանողների, ինչպես նաև, ընդհանրապես, հայագիտությամբ հետաքրքրվողների համար: Այն կարող է կարևոր նյութ մատուցել հայագիտական հետագա ուսումնասիրություններին, նպաստել հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հարցերի պարզաբանմանը, օգտակար կլինի նաև ժողովրդագրական, հանրագիտարանային-տեղեկատու աշխատանքներ կատարող մասնագետներին:

Հուսանք, որ այս աշխատանքը նախադեպ կդառնա ոչ միայն Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի, Արցախի Հանրապետության և Ջավախքի բարբառային համապատկերների ուսումնասիրության ու հրատարակման գործում, այլև կունենա իր տրամաբանական շարունակությունը՝ հնարավորինս ընդգրկելով նաև մեր պատմական հայրենիքի կորուսյալ հատվածների բարբառները:

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Նախիջևանի և Վայոց ձորի տարածքների բարբառների ուսումնասիրություն: Հեղինակ է 1 մենագրության, ավելի քան երկու տասնյակ գիտական հոդվածի: artva@list.ru